

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. օգոստոսի 25-ի

նիստի /արձանագրություն N 21/

1. ԵԹԿՊԻ-ի հավատարմագրման փորձագիտական հանձնախմբի եզրակացության վերաբերյալ Հ. Ավագյանի զեկույցն ընդունելի գիտություն,
 - 1.1 հիմք ընդունելով փորձագիտական հանձնախմբի դիտարկումները՝ ինստիտուտում տարվող աշխատանքները բարելավելու և այն միջազգային չափանիշների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ձեռնարկել հետևյալ միջոցները՝
 - 1.1.1 ինստիտուտի Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի աշխատակազմը համալրել մասնագետներով և տալ կոնկրետ հանձնարարականներ,
 - 1.1.2 ա.թ. սեպտեմբերի 1-ից ռեկտորի օգնական Պերճ Մսրյանին ազատել ռեկտորի օգնականի պարտականություններից և նշանակել Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի ղեկավարի տեղակալ,
 - 1.1.3 Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի աշխատանքները վերակառուցելու և բարելավելու համար վերջնաժամկետ սահմանել ա.թ. դեկտեմբերի 31-ը,
 - 1.1.4 Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնում տարվող աշխատանքների ընթացքը վերահսկելու նպատակով յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ լսել կենտրոնի ղեկավարի հաշվետվությունը,
 - 1.1.5 ա.թ. սեպտեմբերի 1-ից վերակազմավորել ինստիտուտի Որակի ապահովման կենտրոնի աշխատակազմը հետևյալ կերպ՝
 - 1.1.5.1 Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Ջարուհի Սահակյանին փոխադրել կենտրոնի ղեկավարի տեղակալի հաստիքի,

- 1.1.5.2 Որակի ապահովման կենտրոնի ղեկավար նշանակել ԲԳԹ, դոցենտ
Հասմիկ Պավլիկի Իսրայելյանին: Հ.Պ. Իսրայելյանին ընդգրկել գիտական
խորհրդի և ռեկտորատի կազմում,
- 1.1.6 Որակի ապահովման կենտրոնի աշխատանքները վերահսկելու
նպատակով յուրաքանչյուր եռամսյակը մեկ լսել կենտրոնի ղեկավարի
հաշվետվությունը՝ կատարված աշխատանքի վերաբերյալ,
- 1.1.7 հանձնարարել ֆակուլտետների ղեկանների և ներկայացնել թեկնածուներ
ինստիտուտի որակի հանձնաժողովի կազմում ընդգրկելու համար:
2. Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման 2016-2017 ուս. տարվա
ընդունելության գործընթացի նախապատրաստման ընթացքը համարել
բավարար,
- 2.1 հանձնարարել ամբիոնների վարիչներին ներկայացնելու հեռակա ուսուցման
մասնագիտական կուրսերի ղեկավարների թեկնածությունները,
- 2.2 Ռեժիսուրա մասնագիտության հեռակա ուսուցման երկրորդ կուրսի ղեկավար
նշանակել Վիգեն Ստեփանյանին:
3. Ինստիտուտի նախապատրաստական բաժնի աշխատանքները
վերակազմակերպելու նպատակով հանձնարարել ինստիտուտի
մեթոդխորհրդին մշակել և ԳԽ հաստատմանը ներկայացնել
նախապատրաստական բաժնի գործունեության կանոնակարգը:
4. ԵԹԿՊԻ-ի մագիստրատուրայի 2016-2017 ուս. տարվա ընդունելության
երկրորդ փուլն անցկացնել օգոստոսի 29-ին ժ. 10³⁰:
5. Ինստիտուտում տարվող վերանորոգման աշխատանքների ընթացքի
վերաբերյալ Վ. Եղիազարյանի զեկույցն ընդունել ի գիտություն,
- 5.1 վերանորոգման աշխատանքներն ավարտել օգոստոսի 28-ին,
- 5.2 վերանորոգման աշխատանքները ժամանակին և բարեխղճորեն կատարելու
համար սպասարկող անձնակազմին խրախուսել դրամական պարգևով,
- 5.3 հանձնարարել պրոռեկտոր Վ. Եղիազարյանին ներկայացնել դրամական
պարգևատրման ներկայացվող բանվորների ցուցակը:
- 5.4 Սեպտեմբերի 1-ը հանդիսավոր նշելու նպատակով հանձնարարել ուս.
թատրոնի տնօրեն Է. Բարսեղյանին մինչև օգոստոսի 26-ը կազմել և
ներկայացնել սցենարի նախագիծը:

6. ԿՀՊԻ-ի (ВГИК) պատվիրակության այցի կազմակերպման վերաբերյալ Ա. Երզինկյանի գեկույցն ընդունել ի գիտություն,
- 6.1 հանձնարարել Ա. Երզինկյանին Միջազգային հարաբերությունների, լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի հետ համատեղ մշակել և ներկայացնել պատվիրակության ընդունելության աշխատանքային ծրագիր,
- 6.2 ս.թ. հոկտեմբեր ամսին ԿՀՊԻ-ի (ВГИК)) հետ համագործակցության պայմանագրի ժամկետն ավարտվելու կապակցությամբ կնքել նոր համաձայնագիր:
- Համաձայնագրի տեքստի կազմումը հանձնարարել ինստիտուտի իրավախորհրդատուին:
7. Հանձնարարել պրոռեկտոր Հ. Ավագյանին ուսումնասիրել կրճատումների վերաբերյալ ՀՀ վարչապետի գրությունը և ներկայացնել վերլուծություն,
- 7.1 ս.թ. օգոստոսի 29-ին դեկանների և ամբիոնների վարիչների մասնակցությամբ հրավիրել կուրսերի ղեկավարների ժողով:

Նիստի քարտուղար

Վ. Մարգարյան